ՀՈԴՎԱԾՆԵՐ СТАТЬИ

ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

(Ծննդյան 90-ամյակի առթիվ)

Պատմ. գիտ. դոկտոր Վ. Բ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

Լրացավ ականավոր գիտնական, հասարակական-քաղաքական գործիչ, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Աշոտ Գարեգինի Հովհաննիսյանի ծննդյան 90-ամյակը, մի մարդու, որն իր ամբողջ կյանքը նվիրեց հեղափոխական պայքարին, լենինյան կուսակցության գաղափարախոսությանն ու գործին, մարքսիստական հայագիտությանը։

Գործունեության ասպարեզ մտնելով տակավին նախահեղափոխական շրջանում, մեծ հմտությամբ ու հաստատակամությամբ նա կարողացավ զուգակցել հեղափոխականի դժվարություններով ու տառապանքներով լի գործունեությունը գիտնականի անխոնջ պրպտումներին և իր պատվավոր տեղը գրավեց հայ ժողովրդի արժանավոր զավակների շարքում։

Աշոտ Հովհաննիսյանը ծնվել է 1887 թ. հունիսի 17-ին, Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքում։ Նրա մանկությունն անցնում է ազատագրական մաքառումներով հարուստ այդ երկրամասում։ Շուշիի ռեալական ուսումնարանում սովորելու տարիներին Աշ. Հովհաննիսյանը ծանոթանում է մարքսիստական գրականությանը, տարվում սոցիալ-դեմոկրատական գաղափարներով։ Նա 1906 թ. մտնում է Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության շարքերը, ընդունում նրա բոլշևիկյան ուղղությունը և մինչև կյանքի վերջը հավատարիմ է մնում այդ ուղղությանը։ Նույն տարում ավարտում է ուսումնարանը և ուսումնատենչ շատ երիտասարդների նման բարձրագույն կրթություն ստանալու նպատակով մեկնում արտասահման՝ Գերմանիա։ Այնտեղ նա սովորում է Ենայի, Հալլեի և Մյունխենի համալսարաններում, խորանում փիլիսոփայության, պատմության և տնտեսագիտության մեջ, տիրապետում գերմաներեն, ֆրանսերեն և լատիներեն լեզուներին։ Գերմանիայում ուսումնառության տարիներին ընդգրկվում է ռուսական սոցիալ-դեմոկրատական արտասահմանյան կազմակերպության մեջ և մասնակցում նրա աշխատանքներին։

Հիմնավոր կրթություն ստացած, 1913 թ. Աշոտ Հովհաննիսյանը վերադառնում է Անդրկովկաս։ Մեկ տարի Շուշիի հոգևոր սեմինարիայում պատմություն և գերմաներեն դասավանդելուց հետո նա տեղափոխվում է Վաղարշապատ և աշխատանքի անցնում ժամանակի լավագույն հայկական ուսումնական հաստատություններից մեկում՝ Գևորգյան ճեմարանում։ Մանկավարժական աշխատանքին զուգահեռ Աշոտ Հովհաննիսյանը պրպտումներ է կատարում էջմիածնի մատենադարանում, հրապարակում արժեքավոր նոր նյու-

թեր և գիտական հոդվածներ հայ ազատագրական մտքի առանձին դրվագների մասին։ Նա միաժամանակ հեղափոխական-պրոպագանդիստական աշխատանք է տանում ճեմարանի երիտասարդության շրջանում, իր սաներին հաղորդակից դարձնում մարքսիստական գաղափարներին։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության նախապատրաստման ու անցկացման տարիներին Աշոտ Հովհաննիսյանը ծավալում է հասարակական-քաղաքական ակտիվ գործունեություն։ Պատմական այդ օրերին նա Շուշիում հրատարակում է բոլշևիկյան «Նեցուկ» թերթը, որի էջերից պրոպագանդում է լենինիզմի գաղափարները։

Ապա Աշոտ Հովհաննիսյանին տեսնում ենք Բաքվում՝ Անդրկովկասի հեղափոխական պայքարի միջնաբերդում, ուր սկզբում ղեկավարում էր Բաքվի սովետի կուլտուր-լուսավորական բաժինը, ապա՝ Կոմունայի լուսավորության կոմիսարիատի դպրոցական բաժինը։ Բաքվի Կոմունայի անկումից հետո նա անցնում է Մոսկվա, Ազգությունների գործերի ժողկոմատում ղեկավարում Հայկական գործերի կոմիսարիատի գրական-հրատարակչական բաժինը։ 1919 թ. նա վարում է ՌՍՖՍՀ լուսավորության ժողովրդական կոմիսարիատի հայկական բաժինը, միաժամանակ հայ ժողովրդի պատմություն դասավանդելով Լաղարյան ճեմարանում։

Դաշնակցության տիրապետության տարիներին քաղաքական խոր ճգնաժամ ապրող հայ ժողովրդի փրկության միակ ելքը շատերի նման Աշոտ Հովհաննիսյանն էլ տեսնում էր Սովետական Ռուսաստանի հետ ունեցած դաշինքի և սովետական կարգերի հաստատման մեջ և ակտիվորեն պայքարում այդ ուղղությամբ։ 1920 թ. նա Դոնի-Ռոստովում խմբագրում էր «Բանվորի կռիվ» թերթը։ Նույն թվականի հոկտեմբերին Լեգրանի գլխավորած Սովետական Ռուսաստանի դիվանագիտական միսիայի կազմում ժամանում է Հայաստան։

Հայաստանում սովետական կարգերի հաղթանակից հետո հեղափոխական պայքարի բովով անցած կոմունիստական կուսակցության լենինյան գվարդիայի փայլուն ներկայացուցիչներ Ալ. Մյասնիկյանի, Ս. Լուկաշինի, Ս. Կասյանի և կուսակցական ու պետական այլ նշանավոր գործիչների հետ միասին Աշոտ Հովհաննիսյանը ձեռնամուխ է լինում քայքայված ու ավերված երկրի վերականգնմանը, նրա սոցիալիստական շինարարության հիմքերը դնելուն։ Նա նորաստեղծ Սովետական Հայաստանի առաջին լուսավորության ժողովրդական կոմիսարն էր, իսկ 1922 թ. ընտրվում է Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական Կոմիտեի առաջին քարտուղար և այդ պատասխանատու պաշտոնը վարում մինչև 1927 թ.։ Այդ տարիներին նա մեծ ջանքեր է թափում սովետական դպրոցի ստեղծման, Երևանի պետական համալսարանի հիմնադրման, Հայաստանից դուրս գտնվող խոշոր հայագետներին, արվեստի ու գրականության գործիչներին մայր հայրենիքում համախմբելու և առհասարակ սոցիալիստական շինարարության առաջին քայլերը կատարելու գործում։

1928 թ. Աշոտ Հովհաննիսյանը տեղափոխվում է Մոսկվա և շուրջ մեկ տասնամյակ գիտական-մանկավարժական ակտիվ գործունեություն ծավալում այնտեղ։ Երկու տարի ղեկավարում է Մարքսի-Էնգելսի ինստիտուտի միջազգային հարաբերությունների պատմության կաբինետի աշխատանքները, ապա

աշխատում է ՍՍՀՄ Ազգությունների ինստիտուտում, որպես Արևելքի ժողովուրդների ազգային-հեղափոխական շարժումների պատմության պրոֆեսոր։ 1934—1937 թթ. նա ընտրվում է Նյութական կուլտուրայի պատմության պետական ակադեմիայի իսկական անդամ և նրա Մոսկվայի բաժանմունքի դիրեկտոր։ 1936—1937 թթ. վարում է ՍՍՀՄ Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի դիրեկտորի տեղակալի պաշտոնը։



1954 թ. Աշոտ Հովհաննիսյանը աշխատանքի է անցնում Հայաստանի Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում, սկզբում ավագ գիտաշխատողի պաշտոնով, իսկ 1961 թ. մինչև իր կյանքի վերջը (1972 թ. հունիս) ղեկավարում էր ինստիտուտի նոր պատմության բաժինը։ 1960 թ. նա ընտրվում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, այդ ժամանակվանից էլ ստանձնում է պատմության ինստիտուտի կողմից նախապատրաստվող հայ ժողովրդի հնագույն ժամանակներից մինչև մեր օրերն ընդգրկող պատմության գիտական-ակադեմիական հրատարակության ութհատորյակի գլխավոր խմբագրի պարտականությունները։

Աշոտ Հովհաննիսյանը ուժեղ և ինքնատիպ անհատականություն էր։ Նրա բացառիկ աշխատասիրությունը, գիտությանը անմնացորդ նվիրումը, իր և շրջապատի նկատմամբ պահանջկոտությունը, տգիտության ու մակերեսայնության դեմ անհաշտ ու ազնիվ պայքարը, հարուստ գիտելիքները գործընկերներին շռայլորեն հաղորդելու պատրաստակամությունը, հասարակական երևույթների նկատմամբ նախանձախնդիր վերաբերմունքը բարերար ազդեցություն էին գործում ոչ միայն ներակադեմիական շրջաններում, այլև առհասարակ, հայ մտավոր կյանքի վրա։ Նա առանձնակի սեր ուներ սեփական մտքերն ու խոհերը իր աշակերտների հետ կիսելու և դրանով, ինչպես նաև գրավոր ու բանավոր խոսքով, առօրյա շփումներով ու խորհուրդներով կրթում ու դաստիարակում էր երիտասարդ գիտաշխատողներին։ Նա իր աշակերտներից ու գործընկերներից իրավամբ պահանջում էր նվիրվել և խորանալ գիտության մեջ և մշտապես հետամուտ էր ոչ թե շատ գրելուն, այլ լավ գրելուն։

Աշոտ Հովհաննիսյանը խոշոր վաստակ ունի նաև մանկավարժության և հրապարակախոսության մարզում։ Պատկերացում կազմելու համար բավական է նրա դասավանդած ուսումնական հաստատությունների և խմբագրած պարբերականների անունների սոսկ թվարկումն անգամ։ Նա պատմություն, հասարակագիտական առարկաներ և լեզուներ է ավանդել Շուշիի հոգևոր սե-

մինարիայում, Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, Լազարյան ճեմարանում, Երևանի պետական համալսարանում, Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում։ Խմբագրել է «Նեցուկ», «Բանվորի խոսք», «Բանվորի կռիվ» թերթերը և «Նորք» հանդեսը, որ 1920-ական թթ. հետաքրքիր ու ծանրակշիռ պարբերականներից մեկն էր։

1967 թ., ծննդյան ութսունամյակի կապակցությամբ և հասարակական-քաղաքական ու գիտական բեղմնավոր գործունեության համար Աշոտ Հովհաննիսյանը պարգևատրվում է հայրենիքի բարձր պարգևով՝ Լենինի շքանշանով։

* * *

Աշոտ Հովհաննիսյանը շուրջ 60-ամյա արգասավոր գիտական կյանք ունեցավ։ Պատմափիլիսոփայական փայլուն կրթությունը, լեզուների հիմնավոր իմացությունը, համաշխարհային հայագիտության և ռուսական պատմագրության լավագույն ավանդույթների յուրացումը այն ամուր հիմքն էր, որի վրա նա ձևավորվեց որպես լայն պրոֆիլի հայագետ։

Աշ. Հովհաննիսյանի գիտական գործունեությունը ըստ էության բաժանվում է երկու փուլի։ Առաջինն ամփոփվում է գիտական գործունեության սկզբնավորումից մինչև 30-ական թթ. կեսերն ընկած ժամանակաշրջանում, իսկ երկրորդն սկսվում է 50-ական թթ. սկզբներից և հարատևում մինչև իր կյանքի վերջը։ Տարբեր դարաշրջանների նվիրված և տարբեր ժամանակներում գրված նրա յոթանասունից ավելի ուսումնասիրությունների առանցքը հստակորեն կազմել է հայ ժողովրդի ազատագրական գաղափարախոսության, նրա ազգային ու սոցիալական ազատագրության խնդիրը, իսկ մեր երկրի հասարակական-քաղաքական կյանքում նա իր ամբողջ ուժն ու եռանդը, իր ողջ գործունեությունը անմնացորդ նվիրաբերել է այդ վեհ նպատակների կենսագործմանը։

Տակավին 1913 թ. Մյունխենում, գերմաներեն լեզվով լույս տեսավ նրա առաջին աշխատությունը («Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը»), որը ոչ միայն նշանավորում էր հայ մարքսիստական պատմագրության հիմնադիրներից մեկի մուտքը գիտության ասպարեզ, այլև կանխորոշում էր 26-ամյա երիտասարդի ստեղծագործական կյանքի հետագա ուղին, այն է՝ հարևան ժողովուրդների ու երկրների ազգային և սոցիալական ազատագրության պատմության ընդհանուր ֆոնի վրա լուսաբանել հարազատ ժողովրդի ազատագրական մտքի և սոցիալական պայքարի պատմությունը։ 1915—1916 թթ. նա հայ ազատագրական շարժումների վերաբերյալ հրատարակեց մի շարք ուշագրավ հոդվածներ։

Աշոտ Հովհաննիսյանը առաջինն էր մեր պատմագրության մեջ, որ «Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը» (1923 թ.) աշխատությամբ անդրադարձավ Մայիսյան ապստամբությանը, վերլուծեց նրա պատճառները և այն իրավիճակը, որն ի վերջո պետք է հանգեցներ Հայաստանում մեծ Հոկտեմբերի գաղափարների հաղթանակին։

Հայաստանում սովետական կարգերի հաղթանակի, մեր գաղափարական հակառակորդների և առաջին հերթին դաշնակցության դեմ պայքարի հարցն-

րին են նվիրված 20-ական թթ. համաշխարհային պատմական նշանակություն ունեցող քաղաքական իրադարձությունների թարմ ազդեցության տակ գրված նրա «Մեր հեռանկարները և լենինիզմը», «Համազգային կրիզիսը», «Դաշնակցության իդեոլոգիայի ընթացիկ կուրսը», «Գաղութահայ խնդիրներ», «Դաշնակցության առթիվ», «Դաշնակցությունը և պատերազմը» և բազմաթիվ այլ հոդվածներն ու գրքույկները, որոնք աչքի են ընկնում սոցիալ-քաղաքական իրադրության լուրջ վերլուծմամբ։

Թարմ շնչով և ուրույն գիտական մոտեցմամբ են գրված միջնադարյան Հայաստանի պատմության պրոբլեմներին նվիրված «Պետրոս դի Սարդիս Գիլանենց», «Զաքարիա Ագուլեցու գործերը և օրերը», «Գեղամա և Ծարա մելիքների տոհմը» և բազմաթիվ այլ ուսումնասիրություններ։

1921 թ. հրատարակվեց սովետական պատմագրության առաջնեկը՝ Աշ. Հովհաննիսյանի «Հայ ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը» մենագրությունը։ Հատկանշական է, որ պատմաբանը սովետական կարգերի հաստատման հենց առաջին օրերին հասկանում էր այդ պրոբլեմի գիտաքաղաքական նշանակությունը և անդրադառնում դրան։ Սովետահայ պատմագրության ժամանակի մակարդակով և մասնագետների պակասով, թերևս, կարելի է բացատրել այն հանգամանքը, որ միայն երկու տասնամյակ անց ընկալվեց հայ-ռուսական հարաբերությունների թեմատիկայի կարևորությունը և սկսվեցին աշխույժ հետաքրքրությունն ու արգասավոր հետազոտական աշխատանքներ։ Աշ. Հովհաննիսյանի աշխատության մեջ, Մոսկվայի արտաքին գործոց մինիստրության արխիվում հայտնաբերված վավերագրերի հիման վրա, քննարկվում են XVII դարի վերջերի և XVIII դարի սկզբի հայ-ռուսական հարաբերությունները, այդ շրջանի հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչներ Իսրայել Օրու և Մինաս վարդապետի գործունեությունը։ Գրքի հավելվածում բերվում են 16 արխիվային փաստաթղթեր։

Ցավով պետք է արձանագրել, որ Ջեմալ փաշայի «Հայկական հարց» (1924 թ.) պատմական փաստերը խեղաթյուրող աշխատանքին կցված առաջաբանում, մասամբ էլ՝ հայերի ռուսական կողմնորոշմանը նվիրված գրքում և «Աբովյան» ուսումնասիրության մեջ Աշ. Հովհաննիսյանը տուրք է տվել ժամանակի գաղափարախոսության մեջ տիրապետող գռեհիկ սոցիոլոգիզմին, որն առաջին հերթին դրսևորվում էր պատմա-մշակութային երևույթների միակողմանի մեկնաբանությամբ, ցարիզմի՝ ծայրահեղության հասցրած քննադատությամբ։ Եվ դա հասկանալի է. լինելով ակտիվ, մարտնչող անհատականություն և մշտապես գտնվելով գիտական-քաղաքական պայքարի հորձանուտի մեջ, նա ընթացել է ժամանակին իշխող մտայնությունների հունով։

1933 թ. լույս տեսած «Աբովյան» ուսումնասիրության մեջ, որ դրվել է ի պատասխան Բակունցի՝ մեկ տարի առաջ հրատարակված «Խաչատուր Աբովյանի անհայտ բացակայումն» աշխատության, Աշ. Հովհաննիսյանը հայ մեծ գրողին ու լուսավորչին տալիս է ճիշտ բնութագրումներ, սակայն միաժամանակ Աբովյանին անհիմն կերպով մեղադրում է ցարապաշտության մեջ։

Իր ուսումնասիրությունները սկզբնաղբյուրների վրա կառուցող, գիտական իր հետևությունները փաստերից բխեցնող գիտնականի համար անհարիր

ու անհամատեղելի պետք է լիներ սխեմատիզմը։ Պատմաբանի ներքին ինքնազգացման ուժով և փաստական նյութի ազդեցության շնորհիվ Աշ. Հովհաննիսյանը հաղթահարում է տիրապետող մտայնությունը։ «Զարգացման միասնական պրոցեսի,— գրում էր նա 1935 թ.,— տարբեր աստիճաններից քաղված պատմական կցկտուր դեպքերի ու օրինակների կուտակումը պատմություն չէ տակավին, ինչպես նաև պատմական պրոցեսի սխեմատիկ ընդհանրացումը չի նույնանում պատմական իրական ու ամբողջական պրոցեսի հետ։ Պատմությունը գրվում է կապակցվող փաստերի հիման վրա, և պատմական պրոցեսի դիալեկտիկական ընդհանրացումն իսկ արվում էր կոնկրետ նյութի մանրազնին վերլուծության ու առկա աղբյուրներն օգտագործող ուսումնասիրություններից հետո միայն»[1]։ Որ այս հայեցակետը նա մարմնավորեց իր կողմից հրատարակված Մ. Նալբանդյանի «Անտիպ երկերի» ծավալուն կոմենտարներում։

Մոսկվայի և Լենինգրադի կենտրոնական արխիվներում պրպտումներ կատարելով, Աշ. Հովհաննիսյանը հայտնաբերեց Մ. Նալբանդյանի մի շարք անտիպ գործեր և ընդարձակ առաջաբանով ու ծանոթագրություններով հրատարակեց դրանք։ Այդ հրատարակությանն անծանոթ ընթերցողին կարող է թվալ, թե տպագրվող բնագրին կցված են, մեր ներկա հասկացությամբ, սովորական առաջաբան և ծանոթագրություններ։ Իրականում «Անտիպ երկերի» կոմենտարների ու ծանոթագրությունների բաժինը, որ զբաղեցնում է գրքի մի զգալի մասը, ծավալուն ուսումնասիրության բնույթ ունի։ Փաստալից այդ «Կոմենտարներում» լուսաբանվում են ոչ միայն Նալբանդյանի կյանքի ու ստեղծագործության, այլև նրա ժամանակաշրջանի հասարակական հոսանքների, գրական-հասարակական շարժման շատ խնդիրներ։ Աշ. Հովհաննիսյանը համոզիչ կերպով ցույց է տվել, թե ինչպես Ռուսաստանում ստեղծված հեղափոխական իրադրության պայմաններում մշակվեց Մ. Նալբանդյանի հեղափոխական-դեմոկրատական աշխարհայացքը և բացահայտել այն աղերսը, որ կար նրա տեսակետների և ռուս «վաթսունականների»՝ Գերցենի, Բակունինի, Օգարյովի, Չերնիշևսկու ուսմունքի միջև։ «Անտիպ երկերը» սկզբնաղբյուրների հիման վրա գրված փաստորեն առաջին լուրջ ուսումնասիրությունն էր Մ. Նալբանդյանի մասին։

* * *

Մոտ մեկ և կես տասնամյա ընդմիջումից հետո, 1950-ական թթ. սկզբներից սկսվում է Աշոտ Հովհաննիսյանի գիտական գործունեության երկրորդ՝ առավել բեղուն և արգասավոր շրջանը։

Մինչ այդ լուրջ տեղաշարժեր էին կատարվել մեր երկրի գաղափարական կյանքում։ Լիովին հաղթահարվել էին անցյալի ժառանգության գնահատման վաղեմի գռեհիկ մոտեցումները։ Հայագիտությունը խոշոր քայլերով առաջ էր ընթանում և հրապարակ հանում նաև անցյալի նյութական ու հոգևոր կյանքին վերաբերող փաստական վիթխարի նյութ։ Աշ. Հովհաննիսյանը ձեռնամուխ է լինում իր նախասիրած պրոբլեմների շուրջը տասնամյակների

---

1 Մ. Նալբանդյան, Անտիպ երկեր, խմբագրություն և կոմենտարներ Աշ. Հովհաննիսյանի, Երևան—Մոսկվա, 1935, էջ XI—XII։

մտորումներն ու մտահղացումները գիտականորեն ընդհանրացնելու խնդրին։ Նկատի առնելով հասարակական գիտությունների վերջին շրջանի արդյունքները և հենվելով աղբյուրագիտական հարուստ նյութի վրա, նա ստեղծում է նոր որակի մի շարք աշխատություններ, որոնք իրավամբ հարստացնում են սովետահայ պատմագիտությունը։

Հայ գրականագիտական միտքը անցյալում մեկ անգամ չէ, որ անդրադարձել է միջնադարյան հայ պոեզիային, այդ թվում և նրա նշանավոր դեմքերից մեկի՝ Ֆրիկի ստեղծագործությանը։ Մասնավորապես Մանուկ Աբեղյանը իրեն հատուկ խորությամբ տվել է միջնադարյան այդ խոշոր տաղերգուի ստեղծագործության պատմա-գեղարվեստական արժեքավորումը։ Տրամաբանական էր կարծել, որ առանց նոր նյութերի հայտնաբերման հազիվ թե կարելի էր նոր հայեցակետ ունենալ Ֆրիկի կյանքի ու գործի նկատմամբ։

Եվ ահա 1955 թ. հրատարակվում է Աշ. Հովհաննիսյանի «Ֆրիկը պատմաքննական լույսի տակ» մենագրությունը։ Պատմաբանը չի էլ փորձում տալ մեծ տաղերգուի ստեղծագործության, նրա բանաստեղծական արվեստի գեղարվեստական վերլուծությունը, այլ միանգամայն նոր տեսանկյունով է մոտենում հարցին։ Նա բացահայտում է բանաստեղծի ապրած դարաշրջանի տնտեսական ու սոցիալական հարաբերությունների ամբողջ պատկերը և այդ ֆոնի վրա դիտում նրա տաղերի, նրա արտահայտած տրամադրությունների ու ապրումների սոցիալ-պատմական իմաստը։ Պատմասոցիոլոգիական նման քննարկման շնորհիվ Ֆրիկը պատկերանում է որպես միջնադարյան այն մեծություններից մեկը, որոնք անդրադարձրել են իրենց դարաշրջանի հասարակական հեղաբեկումները։ Հեղինակը ցույց է տվել, որ Ֆրիկը զերծ չի եղել միջնադարյան միստիցիզմից, սակայն այդ միստիցիզմը գաղափարական մի շղարշ է եղել, որը սքողել է նրա հակաֆեոդալական տրամադրությունները։ Բացահայտելով տիրող անարդարությունների դեմ Ֆրիկի որոնող մտքի համարձակ ծառացումները, Աշ. Հովհաննիսյանը միաժամանակ շեշտում է այն հանգամանքը, որ դա բնավ հիմք չի տալիս կարծելու, թե Ֆրիկը բարձրացել է միջնադարը հերքող հեղափոխական ընդվզումի աստիճանի։

Այս շրջանում Աշ. Հովհաննիսյանը հրատարակում է նաև միջնադարյան Հայաստանի պատմա-մշակութային տարբեր հարցերին նվիրված գիտական մի շարք լուրջ հոդվածներ՝ «Մաշտոցյան գրերի պատմական նշանակությունը», «Սմբատ Զարեհավանցին, նրա ժամանակը ու ժամանակակիցները», «Հայերի ռուսական կողմնորոշման նախապատմությունից» և այլն։

Տասնյակ տարիների իր անխոնջ պրպտումները, սկզբնաղբյուրների մանրախույզ վերլուծությունները, գիտական վարկածներն ու եզրահանգումները Աշ. Հովհաննիսյանն ընդհանրացրեց «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության», «Նալբանդյանը և նրա ժամանակը» ծանրակշիռ հետազոտությունների մեջ։

«Դրվագների» երկհատորյակում (1957, 1959) պատմաբանը բացահայտել է, որ հայ ազատագրական միտքը շուրջ հազարամյա դարաշրջանում արտահայտվել է տարբեր ձևերով ու եղանակներով՝ օտար տիրապետության դեմ ընդվզող հասարակական խավերի մտայնությամբ, ներքին շահագործողների դեմ աշխատավորության մղած պայքարի գաղափարախոսությամբ, ժողովրդական հերոսավեպի և ազատագրական առասպելների ու գուշակությունը-

ների ձևով։ Հայ ազատագրական առասպելը կղերա-ֆեոդալական պատմագրությունը քննարկել է կրոնական սխոլաստիզմի ու միստիցիզմի դիրքերից, իսկ բուրժուական պատմագրությունը զբաղվել է գերազանցապես առասպելի բանասիրական քննությամբ։ Վերջինս, չկարողանալով թափանցել ազատագրական լեգենդի բուն էության մեջ, այն դիտել է իր սոցիալական միջավայրից և ժողովրդական զանգվածների մղած ազատագրական պայքարից ամբողջովին կտրված։

Աշոտ Հովհաննիսյանը, մարքսիստական պատմագրության դիրքերից առաջին անգամ քննարկելով պրոբլեմը, տվել է ազատագրական առասպելի բուն էությունն ու նպատակադրումը, նրա զարգացման ընթացքը, կրած փոփոխությունները և, որ կարևոր է, սոցիալական միջավայրը։ Նա հատուկ ուշադրություն է դարձրել ժողովրդական զանգվածների ազատագրական պայքարի պատմության հարցերի վրա, բացահայտել սոցիալական ներհակ ուժերի գաղափարական հակամարտը հայ ազատագրական մտքի պատմության մեջ։ Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության սոցիալ-քաղաքական պայմանների և միջնադարյան տեսությունների ու գաղափարաբանության համակողմանի լուսաբանումը գրքի կարևոր արժանիքներից է։ Հեղինակը ազատագրական գաղափարախոսության կողմնորոշումների խնդրում տեսնում է երկու իրարից տարբեր պատմաշրջան։ Առաջինը ֆեոդալական հարաբերությունների առաջացման ու զարգացման դարաշրջանն է՝ V—XIII դդ.։ Այս շրջանում Անդրկովկասում և Հայաստանում առաջանում են ֆեոդալական պետություններ, ուժեղանում է օտար տիրապետության դեմ հայերի, վրացիների, աղվանների համատեղ պայքարն ու անկախ ֆեոդալական պետություններ ստեղծելու նրանց փորձերը։ Երկրորդ փուլը սկսվում է մոնղոլական տիրապետության շրջանից, երբ ֆեոդալական տները մանրատվում են, երկրի տնտեսական կյանքը անկում է ապրում։ XV—XVII դդ. լայն չափեր է ընդունում օտար տարրերի ներթափանցումը Հայաստան, հայերի հարկադրված դավանափոխությունը, նրանց էթնիկական դիմահեղումը։ Արտագաղթի ու տեղահանումների հետևանքով հայ ժողովուրդը ցիրուցան է լինում, կաղմալուծվում է նրա հավաքական ուժը։ Նման պայմաններում ազատագրական շարժումները թուլանում են և ընդունում եվրոպական պետությունների հետամուտ ու ապարդյուն դիվանագիտական բանակցությունների բնույթ։

Հեղինակն ըստ ամենայնի բացահայտել է սոցիալ-քաղաքական այն պայմանները, որոնց հետևանքով ազատագրական շարժումների արևմտաեվրոպական դեգերումները սկսել էին երևան բերել իրենց սնանկությունը։ Եվ ապա, Իսրայել Օրու գործունեության քննական վերլուծության հիման վրա, ցույց է տալիս հայ ազատագրական մտքի անվերադարձ դիմաշրջումը, հայ ժողովրդի ազատագրության ռեալ հեռանկարները միայն Ռուսաստանի հետ կապելու դարակազմիկ շրջադարձը։

Հետագա ուսումնասիրություններում, մասնավորապես «Դրվագների» անմիջական շարունակությունը հանդիսացող XVIII դարի առաջին 30-ամյակի երկու ժողովուրդների կապերին նվիրված փաստաթղթերի ժողովածուի ծավալուն ներածական ուսումնասիրության մեջ, Աշ. Հովհաննիսյանը վեր

---

[2] «Армяно-русские отношения в первой трети XVIII в.», Сборник документов, т. 2, ч. I, Ереван, 1965, ч. II, 1967.

հանեց XVIII դարի առաջին քառորդի հայ-ռուսական հարաբերությունների, հայերի ռուսական կողմնորոշման խորանալու և համաժողովրդական բնույթ ընդունելու պատմությունը։ Հեղինակը լուսաբանում է մասնավորապես հայ-ռուսական ռազմա-քաղաքական և տնտեսական առնչությունները, որոնք արտահայտվում էին ռուսական շրջանների և Նոր Ջուղայի հայ վաճառականների միջև տեղի ունեցող աշխույժ առևտրական կապերով։ Նա անդրադառնում է Ռուսաստանի արևելյան քաղաքականության հիմնական կողմերին, Անդրկովկասի ժողովուրդների միասնական հակաօսմանյան ճակատ ստեղծելու ուղղությամբ Պետրոս Մեծի պատվիրակ Իվան Կարապետի գործունեությանը։ Ներածականում բացահայտվում են նաև Ռուսաստանի պարսկական արշավանքի շնորհիվ աշխուժություն ապրող հայ-վրացական միասնական ուժերի ազատագրական մաքառումները, ինչպես նաև Դավիթ բեկի գլխավորած ազատագրական հերոսական շարժումները։

Միքայել Նալբանդյանի կյանքի ու գործունեության, հայ հեղափոխական դեմոկրատիայի, նրա ակունքների, ժամանակի ու միջավայրի և հարակից այլ հարցերի վերաբերյալ իր երկարամյա հետազոտությունները Աշ. Հովհաննիսյանը ամփոփեց 1955—1956 թթ. լույս տեսած «Նալբանդյանը և նրա ժամանակը» երկու ստվար հատորներում։ Աղբյուրների քննական վերլուծման ու համադրման միջոցով հեղինակը տալիս է անցյալ դարի կեսերի հայ իրականության հասարակական-քաղաքական և մտավոր-գրական կյանքի ամբողջական պատկերը։ Նա համոզիչ կերպով ցույց է տվել, որ Մ. Նալբանդյանը, հաղթահարելով ազգային նեղ շրջանակները, ջանացել է հայ դեմոկրատական-ազատագրական պայքարը լծորդել համառուսաստանյան հեղափոխական շարժումների հետ։ Ազգային-լուսավորական, ազգային-ազատագրական իր պայքարի ընթացքում Մ. Նալբանդյանը դնում էր այնպիսի խնդիրներ, որոնք համազգային արձագանք էին ստանում կամ կապվում էին ռուս, կամ արևմտաեվրոպական հեղափոխական հեռանկարների հետ։ Այդ հանգամանքն իր հերթին նպաստում ու հեշտացնում էր Նալբանդյանի ու նրա կուսակիցների անցումը մտավոր-քաղաքական պայքարի մի փուլից մյուսին։ Հաճախ նման համընդհանուր բնույթ էր ստանում նաև նրա և իր կողմնակիցների պայքարը հետադիմական ուժերի դեմ։ Աշ. Հովհաննիսյանը ցույց է տալիս Մ. Նալբանդյանի գաղափարական կազմավորման պրոցեսը, նրա հեղափոխական-դեմոկրատական հայացքների ձևավորման պատմա-հասարակական աղբյուրները սերտորեն կապված նրա ապրած դարաշրջանի մտավոր կյանքի, սոցիալական պայքարի, հասարակական տարբեր հոսանքների միջև տեղի ունեցող հակամարտության հետ։ Աշխատության մեջ ներկայացվում և բնութագրվում են XIX դարի 50—60-ական թթ. հայկական իրականության հասարակական-քաղաքական հոսանքները։ Գրքի առանձին բաժիններ նվիրված են արևմտահայ կյանքին ու ազատագրական շարժումներին, սահմանադրական պատրանքներին, ազատամիտ հրապարակախոսությանն ու դեմոկրատիային, որոնց հետ Նալբանդյանը ձգտում էր միասնական ճակատով պայքարել արևմտահայ ռեակցիոն ուժերի դեմ։ Աշ. Հովհաննիսյանը ընդգծում էր, որ Մ. Նալբանդյանը հայ իրականության այն եզակի գործիչն էր, որն իրար շաղկապեց արևելահայ և արևմտահայ դեմոկրատիան և աշխատեց նրա պայքարը տանել մեկ միասնական հունով։ Իրեն ընդգրկող ժամանակաշրջանին

նախորդող և նրան հաջորդող պատմական իրադարձությունների դիալեկտիկայի մեջ քննարկելով Նալբանդյանի դարաշրջանի հարուցած հասարակական խնդիրները, Աշոտ Հովհաննիսյանը ի հայտ բերեց XIX դարի կեսերի հայ հասարակական մտքի ազգային-քաղաքական պայքարի հիմնական օրինաչափությունները։ Նալբանդյանին նվիրված այս աշխատության մեջ քննարկվող պրոբլեմները ոչ միայն պատմագիտական նշանակություն ունեն, այլև կարևոր են գրականագիտության[3], մամուլի, հասարակական մտքի, մշակույթի պատմության համար։

Ինչպես «Դրվագները», այնպես էլ Նալբանդյանին նվիրված ուսումնասիրությունները աչքի են ընկնում պատմական երևույթների լայն ընդգրկմամբ, պրոբլեմի հետազոտման խորությամբ, գիտական հարցադրումների թարմությամբ և անցյալի իրողություններ իրենց զարգացման դիալեկտիկայի մեջ քննարկելու հեղինակի կարողությամբ։ Կարելի է վստահորեն ասել, որ փաստական-աղբյուրագիտական հսկայական նյութով, պատմագիտական լայն պաստառի վրա ստեղծված այս երկու աշխատությունները Աշոտ Հովհաննիսյանի հաստատուն տեղն ապահովեցին հայագիտության մեծ երախտավորների շարքում։

Բազմավաստակ գիտնականը կյանքի վերջին տարիներին զբաղված էր «Նալբանդյանը և նրա ժամանակը» աշխատության տրամաբանական շարունակությունը հանդիսացող՝ XIX դարի երկրորդ կեսի հայ հասարակական հոսանքների և ազգային-քաղաքական կուսակցությունների պատմության հարցերի մշակմամբ։

Նրան զբաղեցնողը հասարակական մտքի պատմության երևույթների դիալեկտիկական զարգացման, նրա առաջացման ու ապրած էվոլուցիայի հետևելու խնդիրն էր։

Աշոտ Հովհաննիսյանը, իրավամբ, գտնում էր, որ սովետահայ պատմագրությունը անհրաժեշտ խորությամբ ու լրջությամբ չի ուսումնասիրել անցյալ դարի 70—90-ական թվականների հայ հասարակական հոսանքների և ազգային քաղաքական պայքարի պատմությունը, որ պատմագիտությունը, փաստորեն, 50—60-ական թվականների հեղափոխական դեմոկրատներից անսպասելի անցում է կատարում դեպի դարավերջի սոցիալ-դեմոկրատիան։ Դրա հետևանքով անհասկանալի է մնում XIX դարի վերջին քառորդի հասարակական մտքի և առհասարակ գաղափարախոսության ներհակ պայքարի շատ կողմեր ու դրսևորումներ։ Նկատվող այդ թերիչքի հետևանքով հստակ մեկնություն չի ստանում նաև հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի առաջացման պատմական ակունքների հարցը։

Հանրապետության գիտական մամուլում Աշ. Հովհաննիսյանը հրապարակեց այս պրոբլեմին նվիրված՝ «XIX դարի 50—60-ական թթ. արևելահայ հասարակական-քաղաքական հոսանքները»[4]։ «Արևելահայերի մասնակցությունը

---

3 Աշ. Հովհաննիսյանի ուսումնասիրությունների գրականագիտական նշանակության մասին տե՛ս նրա ծննդյան 80-ամյակին նվիրված «Էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության» (Երևան, 1971) հոդվածների ժողովածուն։

4 «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 4, 1966, 1։

Ռուսաստանի և Անդրկովկասի հեղափոխական շարժումներին»[5], «Արծրունու և Բաֆֆու դաղափարական ներհակության ակունքները»[6], «Հնչակյանների կազմավորման դաղափարական արմատները»[7], «80-ական թթ. առաջին կեսի արևելահայ ազգային նարոդնիկական խմբակները»[8], «Արևելահայ լիբերալիզմը և նարոդնիկական ներհակությունները 90-ական թվականների սկզբներին»[9] հոդվածները, որոնցում լուսաբանվում են նարոդնիկական շարժման էությունը, հայ երիտասարդների ու առաջավոր մտավորականության մասնակցությունը այդ շարժմանը, համառուսաստանյան հեղափոխական անցքերի և հայ իրականության հուզող խնդիրների, մասնավորապես արևմտահայ ազգային-ազատագրական հարցում նարոդնիկության դիրքորոշումը, նրա ապրած էվոլյուցիան և տրվում է հասարակական հոսանքների ու ազգային-քաղաքական որոշ կուսակցությունների գաղափարական հայացքների ու սոցիալ-դասակարգային բովանդակության մարքսիստական դնահատությունը։

Աշոտ Հովհաննիսյանի բուռն ու բեղմնավոր կյանքը ընդգրկում է մի ամբողջ պատմաշրջան։ Նա ապրեց այդ կյանքը կուսակցական ու պետական, գիտական-մանկավարժական ակտիվ ու եռանդուն գործունեությամբ, պատանի հասակից որդեգրած մարքսիստական աշխարհայացքի ու համոզմունքների կրքոտ պաշտպանությամբ։ Հասարակական կյանքի հեղաբեկումներին ու մակընթացություններին ենթակա իր անձնական կյանքը ամենուրեք նա ապրեց մաքուր խղճով, կուսակցության ու ժողովրդի շահերով և մշտապես հավատարիմ իր սկզբունքներին։ Սովետահայ պատմագրությունը նա հարստացրեց մնայուն այնպիսի գործերով, որոնք, անտարակույս, մտնում են հայագիտության ոսկե ֆոնդը և նրա հեղինակին կանգնեցնում հայ պատմագիտության խոշորագույն դեմքերի կողքին։

АШОТ ИОАННИСЯН

(К 90-летию со дня рождения)

Доктор историч. наук В. Б. БАРХУДАРЯН

(Резюме)

В статье дается краткий обзор жизни и деятельности академика АН АрмССР, профессионального революционера, члена КПСС с 1906 г., известного партийного и общественного деятеля, выдающегося историка Ашота Гарегиновича Иоаннисяна (1887—1972). А. Г. Иоаннисян активно участвовал в установлении Советской власти в Армении и в закладывании основ социалистического строительства республики. Он был первым наркомом просвещения АрмССР, а впоследствии — первым секретарем ЦК Компартии Армении (1922—1927).

5 Նույն տեղում, 1963, № 1։

6 «Բանբեր Երևանի համալսարանի», 1963, № 1։

7 «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 2։

8 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1963, № 2։

9 Նույն տեղում, 1969, № 2։

В 1913 г. вышла первая работа А. Г. Иоаннисяна («Исраэл Ори и армянская освободительная идея»); почти 60 лет продолжалась плодотворная научная деятельность историка-арменоведа широкого профиля. Его перу принадлежит более 70 научных трудов по истории освободительной мысли, национального и социального освобождения армянского народа. Объемистые двухтомные монографии ученого — «Очерки истории армянской освободительной мысли» (Ереван, 1957, 1959) и «Налбандян и его время» (Ереван, 1955, 1956) — являются крупным вкладом в советскую историографию.